

ԱՐՏԱՇԵՍ ԲԱՍԵՆՑՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
Ձգաբանական փորձաքննությունների բաժնի պետ

ԷԴՈՒԱՐԳ ՇԱԼՁՅԱՆ

Դեպքի վայրի փորձաքննությունների բաժնի պետ

ՎԱՍՊՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԼԱԳԻՄԻՐ ԱՂԱՆԻԿՅԱՆ

ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Դատական փորձագետներ

**ԿԱՐՃԱՓՈՂ ՀՐԱՉԵՆԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՐԱԿՈՑԻ
ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԴԵՊՔԻ ՎԱՅՐԻ
ՉՆՆՈՒԹՅԱՆ, ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ
ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Դեպքի վայրը տարածության մեջ այն հատվածն է, որտեղ տեղի է ունեցել հանցագործությունը: Հրազենի կիրառմամբ կատարված հանցագործություններով դեպքի վայրի տեղազննությունը այնպիսի քննչական գործողություն է, որն արտահայտվում է գործի համար նշանակություն ունեցող փաստական տվյալներ հայտնաբերելու և ամրապնդելու նպատակով, ինչպես նաև դեպքի վայրի և դրա նյութական հետքերի անմիջական ուսումնասիրման մեջ:

Դեպքի վայրի պահպանումը և տեղազննությունը անհետաձգելի քննչական գործողություններ են, քանի որ դրա հապաղումը կարող է հանգեցնել դեպքի վայրի անվերականգնելի փոփոխությունների:

Հրազենի կիրառման հետ կապված գործերով դեպքի վայրի պահպանման և դրա հետագա տեղազննության ժամանակ պահանջվում են ոչ միայն քրեագիտական մշակում անցած դեպքի վայրի զննության ընդհանուր դրույթների կիրառում, նաև այլ գիտությունների բնագավառների հատուկ գիտելիքների կիրառում:

Հրազենի կիրառմամբ հանցագործություն կատարած անձը, անկախ իր կամքից, դեպքի վայրում թողնում է ոչ միայն հրազենի գործածության հետքեր, այլև մի շարք իրեղեն ապացույցներ:

Դեպքի վայրի ճիշտ պահպանման և դրա հետագա զննության արդյունքում այդ իրեղեն ապացույցները կարող են նպաստել հանցագործությունների բացահայտմանը:

Հիմնարարներ - դեպքի վայր, զննակ, կարճափող, փորձաքննություն, պարկուճ:

Կրակոցի հետ կապված գործերի քննության հաջողությունը մեծապես կախված է դեպքի վայրի ճիշտ պահպանումից և քննչական գործողությունների հմուտ, ձեռնհաս անցկացնելուց և առաջին հերթին դեպքի վայրի մանրակրկիտ տեղազննությունից:

Քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեպքի վայրի պահպանման և զննության ժամանակ առավել բարդություն են ներկայացնում այն դեպքերը, երբ որպես հանցագործության գործիք կիրառվել է հրազեն: Հրազենի կիրառման հետ կապված գործերով դեպքի վայրի պահպանման և դրա հետագա տեղազննության ժամանակ պահանջվում են ոչ միայն քրեագիտական մշակում անցած դեպքի վայրի զննության ընդհանուր դրույթների կիրառում, այլ նաև այլ գիտությունների բնագավառների հատուկ գիտելիքների կիրառում:

Ինչպես արդեն նշվել է, կրակոցի հետ կապված գործերով դեպքի վայրի տեղազննությունը

հանդիսանում է քննչական գործողություն, որն արտահայտվում է դեպքի վայրի պարագայի և դեպքի նյութական հետքերի անմիջական ուսումնասիրման մեջ՝ գործի համար նշանակություն ունեցող փաստական տվյալներ հայտնաբերելու, ֆիքսելու և առգրավելու նպատակով:

Ընդհանուր առմամբ դեպքի վայրի պահպանությունը և մասնավորապես հրազենից առաջացած վնասվածքների պահպանումը շատ մեծ նշանակություն ունի դատաձգաբանական փորձաքննությունների կատարման ժամանակ: Տարիների ընթացքում հրազենի կիրառմամբ կատարված հանցագործությունների դեպքի վայրերի զննությունների, ձգաբանական և քիմիական փորձաքննությունների կատարման առանձնահատկություններից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով դեպքի վայրում դեպքի պարագաների թե՛ քննչական և թե՛ փորձագիտական եղանակով վերականգման արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ դեպքի վայրի պատշաճ պահպանման դեպքում հավաս-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տիրության բարձր աստիճանով լուծվում են փորձաքննությանը առաջադրված շատ հարցեր:

Հրագների կիրառմամբ բռնի մահվան դեպքի վայրի զննության ժամանակ քննիչին պետք է հետաքրքրի այն հարցը, թե կոնկրետ դեպքում տեղի է ունեցել սպանություն¹, ինքնասպանություն², թե³ դժբախտ պատահար: Քննիչը, կատարելով դեպքի վայրի զննություն, պետք է ձգտի հայտնաբերել այնպիսի տվյալներ, որոնք կօգնեն ստանալ տվյալ հարցի պատասխանը: Իսկ վերջնականապես այս հարցը հնարավոր է լուծել միայն ամբողջ քննության ավարտից հետո, վկաների հարցաքննության, քննչական փորձարարությունների, տարբեր տեսակի փորձաքննություններ նշանակելու արդյունքում: Ուսումնասիրելով դեպքի վայրի պարագաները՝ քննիչը պետք է համադրի հայտնաբերված հետքերը և իրեղեն ապացույցները և դրա հիման վրա արդեն իսկ զննության ընթացքում առաջ քաշի և ստուգի հնարավոր վարկածները՝ փորձելով հայտնաբերել լրացուցիչ հետքեր և իրեղեն ապացույցներ: Քննչական պրակտիկան ցույց է տալիս, որ շատ հաճախ քննիչը հրապուրվում է մեկ վարկածով, որը ի հայտ է գալիս դեպքի վայրի զննության ժամանակ և հավաքում է միայն այն ապացույցները, որոնք հաստատում են այդ վարկածը: Դրա համար ավելորդ չի լինի մեկ անգամ ևս հիշեցնել, որ տեղագնություն կատարող անձը չպետք է կատարի շուտափույթ հետևություններ կատարվածի մասին՝ չնայած նրան, որ իրեն թվում է, թե իր առաջ քաշած վարկածը ճիշտ է:

Դեպքի վայրի զննության հաջող անցկացման համար պահանջվում է մանրակրկիտ նախապատրաստություն, որը բաղկացած է երկու փուլից.

1. նախապատրաստական միջոցառումներ, որոնք քննիչը իրականացնում է մինչ դեպքի տեղը մեկնելը,

2. նախապատրաստական գործողություններ, որոնք կատարվում են անմիջապես դեպքի տեղում:

Մինչ դեպքի տեղ մեկնելը քննիչը պետք է կատարի հետևյալ նախապատրաստական գործողությունները .

ա) նախնական ինֆորմացիա ստանա կատարված դեպքի մասին,

բ) միջոցներ ձեռնարկի դեպքի տեղի պահպանության ուղղությամբ,

գ) եթե տեղագնությունը ինչ-ինչ պատճառներով հետաձգվում է կամ ուշանում, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի հետքերը և իրեղեն ապացույցները պահպանվեն վնասումներից կամ ոչնչացումից: Չենք, պարկուճները և այլ առարկաներ, ինչպես նաև հետքերը, որոնք կարող են փչանալ մթնոլորտային տեղումներից. անհրաժեշտ է դրանք ինչ-որ բանով ծածկել: Դրա համար կարելի է օգտագործել դույլեր, արկղեր, տարբեր սարքերի տարաներ, պոլիմերային նյութից տոպրակներ և

սեղանի մոմլաթ. ընդ որում դրանք իրենց չափերով պետք է ավելի մեծ լինեն, քան ծածկվող առարկաները կամ հետքերը: Խորհուրդ չի տրվում զենքը, պարկուճները և այլ իրեղեն ապացույցներ ծածկելու համար օգտագործել քիմիական նյութերի տարաներ, քանի որ որոշ դեպքերում կարող է դժվարացնել քիմիական հետազոտությունը: Եթե կան կասկածանքներ, որ դեպքի վայրով կարող է անցնել ինչ-որ մի տրանսպորտի միջոց, ապա անհրաժեշտ է տեղադրել սահմանափակող նշաններ և կազմակերպել տրանսպորտի շրջանցիկ ճանապարհ,

դ) միջոցներ ձեռնարկի դեպքի տեղում օպերատիվ բնույթի անհրաժեշտ միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ, օրինակ՝ այն դեպքում, եթե բժշկական օգնություն ցույց տալու համար դեպքի վայր է ներկայացել բժիշկը, անհրաժեշտ է նրան նախազգուշացնել, որ նրա կողմից չփչացվեն հետքերը և իրեղեն ապացույցները, ինչպես նաև չփոխվի տուժողի կողքին գտնվող զենքի, գնդակների, պարկուճների և այլ առարկաների տեղակայումը,

ե) լուծի տեղագնության մասնակիցների հարցը,

զ) նախապատրաստի անհրաժեշտ գիտատեխնիկական միջոցներ:

Դեպքի վայրի ճիշտ պահպանման դեպքում և ճիշտ կատարված գործողությունների արդյունքում ձգաբան փորձագետները հնարավորություն կունենան առավելագույնս ճիշտ պատասխանել քննիչի կողմից առաջադրված հարցերին:

Կրակոցների հերթականության և քանակի որոշումը ըստ արգելքի վրայի հետքերի

Կարճափող հրագներից կրակոցների հերթականության որոշումը հանդիսանում է ամենադժվար հարցերից մեկը, որի լուծումը տրվում է հավանականության տեսքով:

Կրակոցների կատարման հերթականությունը կարող են ցույց տալ.

• Օբյեկտի վրա առկա հրագենային միջանցիկ անցքերի ռադիալ ճաքերի բնութագիրը (ինչպիսիք են ապակին, հախճապակին, ոսկորը և այլն): Կրակոցների ռադիալ ճաքերը ավարտվում են նախորդ կրակոցների նույնանման ճաքերի վրա:

• Քսման գոտու ինտենսիվությունը. օրինակ՝ մաքրված (յուղված) զենքից կատարված կրակոցից քսման գոտու ինտենսիվությունը առաջին կրակոցի դեպքում ավելի քիչ է, քան հերթական կրակոցների դեպքում: Դա բացատրվում է նրանով, որ 2-րդ և հաջորդ կրակոցների դեպքում գնդակը, անցնելով փողի միջով, այնտեղից հավաքում է իր վրա ավելի շատ կրակոցի արդյունքներ, դրանք էլ նստում են արգելքի վրա:

• Չենքի յուղի հետքերի առկայությունը: Կրակոցային վնասվածքի շուրջ զենքի յուղի հայտնա-

բերումը պրակտիկորեն հնարավոր է միայն մաքրված գենքից կրակոցի դեպքում:

• Գնդակի վրա ակոսային հետքերի բնույթը:

Եթե փողանցքը ունեցել է համեմատաբար յուղի հաստ շերտ, այդ դեպքում համաձայն «յուղային սեպ» կոչվող էֆեկտի, առաջին կրակված գնդակի վրա ակոսային դաշտերի ինտենսիվությունը ավելի քիչ է, քան երկրորդ և հաջորդ գնդակներինը:

Կրակված պարկուճների հերթականությունը:

• Այս դեպքում կրակոցների հերթականությունը որոշվում է դեպքի վայրում պարկուճների տեղակայմամբ:

• Թմբուկի մեջ պարկուճների դասավորվածությունը, եթե թմբուկի դիրքը չի փոփոխվել:

• Վնասվածքի դասավորվածության բնույթը ասորճանակ-գնդացիքով կրակելու դեպքում:

• Չենքից կատարված կրակոցների քանակը կարելի է որոշել.

- գնդակային վնասվածքների թվով,

- դեպքի վայրում փամփուշտների, պարկուճների և գնդակների հայտնաբերման թվով նրանց հերթական համադրությունից հետո:

Բացի այս ամենից կրակոցների քանակը կարող է որոշվել կարճափող հրազենի մասերի վրա կրակոցի մրի նստվածության աստիճանով:

Արգելքի վրայից կրակոցի հետքերի իրագործման միջոցները

Վնասվածքների հետազոտման ժամանակ առաջին հերթին անհրաժեշտ է համոզվել, որ այն իրականում հանդիսանում է հրազենային վնասվածք: Սկզբունքորեն հրազենային վնասվածքին պատկանելությունը որոշվում է մորֆոլոգիական հատկանիշների ամբողջականությամբ, որը բնութագրական է կրակոցի տարբեր ֆակտորների ազդեցությամբ. այն է՝ «մինուս հյուսվածքի» առկայությունը, վերքային խողովակում արկի առկայությունը, քսման գոտին և մոտ տարածության կրակոցի հետքերը:

Դիակի արտաքին զննությունը դրա հայտնաբերման վայրում հանդիսանում է պարտադիր, և պետք չէ համարել, որ դետալային զննությունը կկատարվի դիախերճարանում դատաբժշկական հետազոտության ժամանակ, քանի որ դիակի վրա կարող են լինել որոշակի երևույթներ, որոնք ժամանակ անց կարող են փոփոխվել կամ կորչել: Այսպես, դիակի տեղափոխման ժամանակ կարող են անհայտանալ մուտքի և ելքի անցքերի բնորոշ հատկանիշները, օրինակ՝ հագուստի վրա առկա վնասվածքների տեսքը և եզրերի թելիկների ուղղվածությունը, չայրված վառողի մասնիկները և այլն, որոնցով կարելի է որոշել կրակոցի տարածությունը և ուղղությունը, ինչպես նաև լուծել հարցեր, որոնք գործի համար ունեն էական նշանակություն:

Չննելով մուտքի և ելքի վնասվածքները՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրանց ձևի, չա-

փերի, այրվածքի հետքերի առկայությանը, մրտավածությանը, ներդրված վառողի մասնիկների առկայությանը՝ քսման հետքերի և քերծվածքների տեսքով: Բոլոր վնասվածքները հագուստի և դիակի մարմնի վրա պետք է մանրամասն նկարագրվեն զննության արձանագրության մեջ և լուսանկարահանվեն մասշտաբային նկարահանման կանոններով:

Կրակոցի մոտ տարածության հետքերի և քսման գոտու հայտնաբերման համար կիրառվում են տարբեր մեթոդներ:

Ինֆրակարմիր ճառագայթներով զննում

Ինֆրակարմիր ճառագայթներով զննումն ու նկարահանումը հնարավորություն է տալիս հայտնաբերել կրակոցի լրացուցիչ ֆակտորների ազդեցության հետքերը. օրինակ՝ մուգ գույնի գործվածքակտորի, աղտոտված կամ արյունով ծածկված գործվածքակտորի դեպքում: Դա կապված է նրա հետ, որ ինֆրակարմիր ճառագայթները թափանցելով չորացած արյան, շատ ներկանյութերի միջով, անդրադարձվում են կաշվից և տեքստիլային գործվածքակտորից, միևնույն ժամանակ կլանվում են տարբեր մետաղների և ածխածնի կողմից: Կրակոցի մուրը, վառողի հատիկները, մետաղական մասնիկները, քսման գոտին, կլանելով ինֆրակարմիր ճառագայթները, դիտվում են գործվածքակտորի ֆոնի վրա մուգ մոխրագույն:

Ուլտրամանուշակագույն ճառագայթներով զննում

Օբյեկտների ճառագայթումը ուլտրամանուշակագույն ճառագայթներով բերում է նրա լյումինեսցենցիայի, որի ալիքի երկարությունը կապված է նյութի հատկանիշներից: Որպես ուլտրամանուշակագույն ճառագայթման աղբյուր կարող են ծառայել սնդիկ-կվարցային լամպերը:

Հրազենային յուղի բաղադրակազմում մտնող բնական յուղերը ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության տակ լուսարձակում են բաց մանուշակագույն-սպիտակ գույնով, իսկ յուղի մասնիկները՝ դեղնա-նարնջագույն:

Անծուխ վառողի կիսաայրված և ամբողջական մասնիկները նույնպես լյումինեսցենցիայի են ենթարկվում ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության տակ: Ծխավոր վառողը ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության տակ լյումինեսցենցիայի չի ենթարկվում:

Դիֆուզ-հայումնային մեթոդ

Հրազենային վնասվածքի հիմնավոր հատկանիշներից մեկը հանդիսանում է մուտքի վնասվածքի շրջանում կրակոցի մրի մաս կազմող մետաղացման առկայությունը: Կրակոցի մրի բաղադրակազմում կարող է լինել հրապատիճի բաղադրության արդյունքում սնդիկ, անտիմոն, անագ, գնդակի մակերևույթի շփման արդյունքում՝ պղինձ, ցինկ, նիկել, կապար, փողանցքի պատերից եկող երկաթ:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Դրանց հայտնաբերման համար իրենց հեշտության և հասանելիության համար օգտագործվում է դիֆուզ-կոնտակտային մեթոդը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ոչ միայն հաստատել մետաղների բնույթը, այլև նրանց տարածվածության տոպոգրաֆիան: Դիֆուզ-կոնտակտային մեթոդի էությունը հետևյալն է. օբյեկտի մակերևույթի վրա առկա մետաղների որոշակի մաս փոխանցվում է աբսորդենտին, որտեղ և հայտնաբերվում է ռեակտիվ-հայտածիչների օգնությամբ, որոնց փոխազդեցության արդյունքում էլ տալիս են բնութագրական գունավորում: Որպես աբսորդենտ՝ կիրառվում է նախապես ժելատինային շերտով ֆիքսված ֆոտոթուղթը: Աբսորդենտի վրա մետաղի մասնիկները անցնում են դիֆուզիայի արդյունքում: Դրա համար այն ներծծվում է ռեակտիվով, որը կարող է լուծել մետաղը և կիպ սեղմվում է հետագոտվող օբյեկտը: Այսպես, կապարի հայտնաբերման համար ֆիքսված ֆոտոթուղթը կարելի է թրջել նրա համար լուծիչ հանդիսացող քացախաթթվի լուծույթում, իսկ որպես ռեակտիվ-հայտածիչ օգտագործել նատրիումի սուլֆիդի լուծույթը:

Մոտ կրակոցի տարածության և ուղղության հետազոտության փորձագիտական մեթոդները

Այսպիսի փորձագիտական հետազոտությունը, կախված ելակետային տեղեկատվությունից, հնարավոր է 3 իրավիճակներից.

- ունենք վնասվածք ունեցող օբյեկտը և զենքը, որի կրակոցի ժամանակ այն առաջացել է.
- ունենք վնասվածք ունեցող օբյեկտը և հայտնի է օգտագործված զենքի մոդելը.
- ունենք միայն վնասվածք ունեցող օբյեկտը:

Առաջին իրավիճակը: Սկզբնական հետազոտության ժամանակ օբյեկտի վրա փնտրվում է հրազենայինի նման վնասվածքներ: Նրանց համար կատարվում է մորֆոլոգիական հատկանիշների ուսումնասիրություն (տեսքը, չափսը, եզրերի բնութագիրը, «միուս գործվածքի» առկայությունը կամ բացակայությունը): Եթե այդ հատկանիշները նման են հրազենային վնասվածքի բնույթին, ապա դա կողմնորոշում է վառողի մրի, վառողի մասնիկների և յուղի հայտնաբերման համար:

Վնասվածքի շրջակայքում հետազոտություն է կատարվում կրակոցի մրի, նստվածքի, հավվածքի, վառողի մասնիկների և յուղի հետքերի հայտնաբերման համար: Հարկ է նշել, որ տարատեսակ կեղտոտվածությունը, արյունը կամ օբյեկտի մուգ գույնը քողարկում են կրակոցի լրացուցիչ գործոնների հետքերը: Կրակոցի լրացուցիչ գործոնների հետքերի հայտնաբերման համար օգտագործում են անհրաժեշտ մեթոդներ:

Հայտնաբերված համալիր նշանների հիման վրա հաստատվում է.

- վնասվածքի հրազենային բնույթը,
- մուտքի և ելքի հրազենային վնասվածքը,

- կրակոցի տեսակը (ընդհուպ, մոտ, հեռահար),
- կրակոցի կողմնորոշող ուղղությունը,
- կիրառված զենքի տրամաչափի համապատասխանությունը և նրա խմբային պատկանելությունը ներկայացվածին,

հետազոտության հետագա փուլում տարբեր հեռավորություններից միևնույն մոդելի զենքերից կատարված կրակոցների դեպքում համեմատվում են հայտնաբերված համալիր նշանները տեղեկատուի տվյալների հետ: Այսպիսի համեմատական հետազոտությունը շատ դեպքերում փորձագետին հնարավորություն է տալիս մոտեցնել որոշվող հեռավորությունների միջակայքը, որից կարող էին կատարվել փորձարարական կրակոցները:

Փորձարարական նմուշների ստացումը: Փորձարարական կրակոցների ժամանակ անհրաժեշտ է.

- կիրառել այնպիսի փորձարարական թիրախներ, որոնք իրենց ֆիզիկոքիմիական հատկանիշներով առավելագույնս մոտ են հետազոտվող օբյեկտին,

- օգտագործել փամփուշտներ, որ նմանատիպ են դեպքի վայրից առգրավվածներին,

- հաշվի առնել օդերևութաբանական տվյալները կրակոցի պահին:

Երկրորդ իրավիճակը տարբերվում է նրանով, որ համեմատական հետազոտության համար նմուշներ ստանալու համար օգտագործվում է համապատասխան մոդելի հրազեն: Որպես միջակայքի սահման ընտրվում են սահմանային հեռավորությունները՝ մոտ տարածության կրակոցի համապատասխան հետքերի հայտնաբերման:

Երրորդ իրավիճակում կրակոցի տարածությունը մոտավորապես է որոշվում: Դա բացատրվում է նրանով, որ զենքերի մոդելի շատ մեծ տիրույթ է անհրաժեշտ հետազոտել, որոնցից կարող էին կատարվել կրակոցները: Յուրաքանչյուր առանձին դեպքում օգտագործելով տեղեկատուի տվյալները՝ գտնում են կրակոցի տարածության միջակայքի ներքևի և վերևի հնարավոր սահմանները:

Ընդհանուր առմամբ այսպիսի մոտեցումը թույլ չի տալիս հասնել կրակոցի հեռավորության որոշման առավելագույն ճշգրտության: Այդ իսկ պատճառով կրակոցի հեռավորության որոշման նոր մեթոդների մշակումը փորձագիտական հետազոտությունների պրակտիկայում հանդիսանում է ակտուալ խնդիր:

Չրախանություն

1. Криминалистика. Белкин Р.С. Издательство НОРМА Москва, 2005г.
2. Осмотр места происшествия. Разумов Э.А., Малибога Н. П. Редакционно-издательский отдел МВД Украины, 1994г.

Արտաշես Բասենյան
ГНКО “Национальное бюро экспертиз” НАН РА
начальник отдела баллистических экспертиз

Էդուարդ Շալճյան
начальник отдела экспертиз места происшествия

Վասպուր Օհաննիսյան
Վլադիմիր Աղանիկյան
Ափոտ Գասպարյան
судебные эксперты

РЕЗЮМЕ

Особенности определения дистанции выстрела при стрельбе из короткоствольного огнестрельного оружия, осмотра места происшествия, назначения и производства экспертизы

Местом происшествия в пространстве является то место, где было совершено преступление. По делам с применением огнестрельного оружия осмотр места происшествия является неотложным следственным действием, которое выражается в непосредственном исследовании места происшествия и его материальных следов для выявления и обоснования фактических данных, имеющих значение для дела.

Сохранение и исследование места происшествия является неотложным следственным действием, поскольку промедление может привести к неисправимым изменениям.

По делам с применением огнестрельного оружия при осмотре места происшествия и в его последующем осмотре требуются не только применение общих криминалистических знаний в области исследования места происшествия, но и применение специальных знаний в области других научных методик. Лицо, совершившее преступление с применением огнестрельного оружия, помимо своей воли на месте происшествия оставляет не только следы применения оружия, но и ряд вещественных доказательств, которые могут иметь в дальнейшем доказательственные значения в раскрытии преступления.

Ключевые слова: место происшествия, пуля, короткоствольное, экспертиза, гильза.

Artashes Basentsyan
“National Bureau of Expertises” SNPO of the RA National Academy of Science
Head of Department of Firearm Expertises (Forensic Ballistics)

Eduard Shaljyan
Head of Department of expertise scene

Vaspur Hovhannisyan
Vladimir Aghanikyan
Ashot Gasparyan
Forensic experts

SUMMARY

The observation of crime scene for shooting distance determination of a short-barrel gun, the specifications of appointment and performance of examination

Crime scene is a location where a crime took place.

Crime scene investigation of crimes committed using a firearm is such an investigative action which is expressed for the purpose of identification and strength of factual datum significant for the case, as well as for immediate examination of crime scene and its material traces.

To protect and investigate the crime scene is an urgent investigative action as the delay can cause nonrecoverable crime scene changes.

During the crime scene protection for cases connected with the usage of firearm and its further investigations, not only the application of general provisions of criminological development for the previous crime scene examinations are required, but also the application of special knowledge of other scientific areas.

Regardless of his will, the person who has committed a crime using a firearm, leaves not only trace evidence of applied firearm in the crime scene, but also a number of material evidence.

As a result of correct conservation of the crime scene and its further examination the evidences can contribute to the detection of crime.

Keywords: crime scene, bullet, cartridge case, expertise, short-barreled.